

ուրիշ մըն ալ այն տեղը ուր Յիսուս երկար ժամանակ ապրեցաւ» :

Պարսիկ զինուորները Գալիլիա չանցան : Իսլամներն ալ գժբախտաբար Պաղեստինի գրաւումէն վերջ եկեղեցիներու գոյութեան թոյլատու չգտնուեցան , այնպէս որ 725 ին երբ Վիլլիպալտ Նազարէթ այցելեց միայն Աւետման եկեղեցին կանգուն գտաւ : Թ . դարու սկիզբն ալ Նազարէթի վանքերուն մէջ կը գրտնուէին վանականներ , ինչպէս այն լերան վրայ ուրկէ Նազարէթցիք Յիսուսը գահավէժ ընել ուղեցին , Արեւմուտքէն ղրկուած պատուիրակի մը կատարած վիճակագրութեան մը համաձայն :

Յաջորդական յաղթութիւններով Յովհաննէս Չըմըշկիկ կայսրը (*) 925 ին իսլամներէն գրաւեց Տիբեւրիան , Թաբոր լեռը և Նազարէթը , բայց քիչ ժամանակէն ան պալատականներէն սպաննուած ըլլալով՝ նոյն գաւառները դարձեալ Արաբներուն իշխանութեան տակ մնացին :

Երբ Երուսաղէմ Խաչակիրներէն գրաւուեցաւ իսլամները աւերեցին Նազարէթի բոլոր սրբավայրերը , ինչպէս 1103 ին Seawulf կը գրէ . Աւետեաց եկեղեցին միայն խնայուած է : Աւերեալ եկեղեցիները վերանորոգուեցան Խաչակիրներէն . տեղւոյն վանքը փոխուե-

(*) Մասքեոս Ուոհայեցիի պատմութեան համաձայն (էջ 23-34) Յովհաննէս Չմեկիկ հայազաւմ կայսրը նամակ մը կը գրէ Հայոց Աւետոս քաղաւորին եւ կ'ըսէ . «Եւ զսաք յայնմ քաղաքին ի Գաբաւոն գտուր և ողորպաքի Քրիստոսի Աստուծոյ , որով շրջեցաւ իսկ ի վերայ աշխարհի , նոյնպէս եւ զպատկերն Փրկչին զոր Հրէայն յէս ժամանակի խոցեալ էին , ուսի վաղվաղակի ել արիւն եւ ջուր . եւ զխոց իրին ոչ զսաք յայնմ քաղաքին . զպատկան հերոյ զլիտ Կարապետին եւ զՄկրտչին Յովհաննու . եւ առեալ Տանիմք ի պահպանութիւն աստուծապան քաղաքին մերոյ» :